պատմութեան մէջ. Բերլին ուղարկեցինք աբեղաներին, Ս. Պետերբուրգ հոգևորականներին, վաղն էլ Մոսկվա, Կայսրի թագադրութեան հանդիսին ներկայ գտնվելու համար կուղարկենք ոչ թէ զարգացած և արժանաւոր աշխարհականներին, այլ երևի դարձեալ մի վեղարաւորին։

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Յունիսի 25

Զը նայելով որ միջնակարգ դպրոց ունենալու պահանջը օրստօրէ զգալի է դառնում մեր քաղաքի համար և բէալական դպրոց բաց անելու համար կառավարութեան պահանջած 7,000 ր. գումարը արդէն բոլորովին պատրաստ է, այնու ամենայնիւ չը կայ կանոնաւոր հեռանգութիւն չուտափոյթ թոյլտուութիւն ստանալու մի այդպիսի դպրոց հիմնելու համար։ Այստեղ կիսաւարտ և թերուս աշակերտներ մնում են անգործ, շատ անգամ պարապ թափառելիս, իսկ մեր պ. պ. հասարակական գործողները մի այսպիսի կենսական պահանջի վրա, մի այսպիսի առաջնակարգ հարցի վրա երկրորդական և երրորդական ուշադրութիւն են դարձնում։ Եթէ մի կողմից առաջ են գալիս այստեղ զանազան անճոռնի և մանրակրկիտ պատճառաբանութիւններ, որոնք յետաձգում են միջնակարգ դպրոցի բացումը, միւս կողմից կան մեղանում շատերը, որոնք աւելի լաւ են համարում կոյր լինել, քան տեսնել բացումը այդ ուսումնարանի։ Կան այն ասոյիճան խառնակիչ անհատներ, որոնք փորձում են հաւատացնել միամիտներին թէ՝ «7,000 ր. պատրաստի չէ, իսկ եթէ պատրաստ էլ լինի, դարձեալ կառավարութիւնը չի բանայ Ալէքսանդրապօլում միջնակարգ դպրոց։» Ուրքան ուզում են բղաւեն ու ճղաւեն և ջանան հակառակը ցոյց տալու, այնու ամենայնիւ՝ այս այսպէս է։

Մինչև երբ մեր հասարակութիւնը պիտի խափվի ճարպիկ վարվողութիւնից և հաճոյական ուշադրող կեղծ ու պատիր խօսքերից։

***

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍՊԱՆԻԱ

Ռուսաստանի և Գերմանիայի մէջ հալածված հրէաներին Սպանիայի հիւրընկալութիւնը առաջարկելու սկզբնապատճառը սպանիական թագաւորն է եղել և ոչ թէ ազատամիտ մինիստրութիւնը, ինչպէս առաջ կարծում էին։ Հաւատացնում են, որ մինիստրները չափազանց զարմացած էին, երբ թագաւորը առաջարկեց հիւրասիրել հրէաներին, որպէս զի ոչնչանայ այն տարաւորութիւնը, որ գործել են ամբողջ աշխարհի վրա հրէաների նախկին հալածանքները Սպանիայի մէջ։ Մինիստրների խորհուրդը հաւանեց այդ առաջարկութիւնը և թագաւորը ինքը թելադրեց այդ գործի մասին հեռագիրները Սպանիայի ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ։

Մադրիդի խաղատների տէրերը նշանաւոր անկարգութիւններ գործեցին, որովհետև պոլիցիան արգելեց նրանց պարապել այդ ստոր գործով։ Կալդէրօնի յօբելեանից յետոյ խաղատներից շատերը փակվեցան, իսկ մնացածները յանձնվեցան պոլիցիայի հսկողութեանը։ Դրանից յետոյ փողոցների վրա ճայթող ռումբեր զցվեցան։ Կալանաւորվածներից մէկը ցոյց տուեց իր համախոհներին, որոնցից 17 մարդ կալանաւորված են։ Դրանցից շատերը խաղատների տէրերն են կամ նրանց մէջ ծառայողներ։ Ցանցաւորները երևի կենթարկվեն տաժանակիր աշխատանքներին։

### ԲՕԼԳԱՐԻԱ

Սիստովոի մէջ շուտով կը գումարվի բօլգարական ազգային ժողովը, որ առանց վիճաբանութիւնների կը քուէարկէ միայն, թէ արդեօք պէտք է ընդունել բօլգարական իշխանի պահանջները թէ ոչ։ Ժողովը միայն մի օր կը շարունակվի։ Այդ օրվայ ընթացքում մի զօրաբաժին հրացանները պատրաստ կանգնած կը լինի Սիստովոի մէջ։ Դունայ գետի վրա պատերազմական փոքր նաւեր նոյնպէս պատրաստ կը լինեն։ Հազարաւոր ընտրողներ կը հաւաքվեն քաղաքի մէջ, որպէս զի հսկեն իրանց ընտրած պատգամաւորների վրա։ „Times“ լրագրի թղթակիցը հաղորդում է, որ բօլգարական ժողովուրդը հետզհետէ զայրանում է իշխան Ալէքսանդրի քաղաքականութեան դէմ։ Այդ կողմից ուշադրութեան արժանի է Ա-րևելեան-Ռումելիայի մէջ հրատարակվող „Марица“ լրագրի յօդուածը, որ չափազանց պախարակում է բօլգարական կառավարութեան գործադրած կամայական միջոցները ընտրութիւնների վրա ազդելու համար և աւելացնում է, թէ „պետական պարզ յեղափոխութիւնը աւելի լաւ կը լինէր, քան թէ այդ խորամանկ միջոցները“։ Այդ խօսքերը վերաբերում են իշխան Ալէքսանդրի կողմնակիցներին։ Պէտք է նկատել, որ այդ լրագիրը չափաւոր կուսակցութեան օրգան է և որ մինչև այժմ նա մեծ զգուշութեամբ էր վերաբերվում բօլգարական պետական դժուարութիւններին։

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յոն-Թիւրքական սահմանական մասնաժողովը արդէն հասել է Արտա, որտեղ նա սպասում է Դերվիշ-փաշային Պրևեզա ուղևորվելու համար։ Մասնաժողովը պահանջում է, որ Արտան դատարկվի մինչև յուլիսի 5-ը։ Եւրոպական պետութիւնների գործակատարները հասան Պիրէյ, որտեղ նրանք երկար ժամանակ խորհրդակցում էին կոմոնդուրոսի և պատերազմական մինիստրի հետ։

Թիւրքերը մի անգամ հեռացան Արտայից, բայց յանկարծ նորից վերադարձան և գրաւեցին ամրոցները։ Լուր տարածվեցաւ, թէ թէ սուլթանը յայտնել է տեղական իշխանութեանը, որ նա Արտայի տեղ Յունաստանին կը տայ էլասսօն։ Յունական լրագիրները յայտնում են, որ Թիւրքաց զօրքերը վերադարձան Արտա եւրոպական դեսպանների խորհրդի համեմատ քաղաքի մէջ կարգը պահելու համար մինչև յունական զօրքերի հասնելը։ Յոն-Թիւրքական դաշնագրութեան համեմատ եւրոպական սահմանական մասնաժողովը կը դայ Արտա առաջ, քան թէ յունական զօրքերը կը գրաւեն այդ քաղաքը։

### ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հետևեալը։ Ֆրանսիայի և Թիւրքիայի յարաբերութիւնների մասին զանազան լուրեր են տարածված։ Մի կողմից պատմում են, թէ Ֆրանսիական դեսպանը Կ. Պոլսից հեռանալուց առաջ խաղաղասիրական յայտնութիւններ ստացաւ Բ. Դոնից Ֆինանսական հարցի վերաբերութեամբ, իսկ միւսները հաւատացնում են, թէ Յունիսի գործերը մինչ այն աստիճան վատացրին Ֆրանսիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները, որ Ֆրանսիական դեսպանի հեռանալը Կ. Պոլսից դիպլոմատիական անբաւականութեան հետևանք է։ Ամենից հաւանական է, որ Բ. Դուռը կը զգուշանայ Ֆրանսիայի հետ իր յարաբերութիւնները ընդհատելուց։ Ամենքը յիշում են, որ Ֆրանսիան յունական խնդրի լուծելու ժամանակ խոհեմութեամբ էր գործում։ Գօշէն և կոմ Հացֆելդ եկան Կ. Պոլիս պատրաստի մի նախագծով, որ նրանք կամենում էին ընդունել տալ Բ. Դրանը։ Այդ նախագծի համեմատ Թէսսալիան և Կրիտ կղզին պէտք է յանձնվէին Յունաստանին և Թիւրքաց հաւատարմատարները պէտք է չը մասնակցէին դեսպանների խորհրդին։ Ֆրանսիական դեսպանը ընդդիմացաւ այդ նախագծին։ Նա ապացուցեց, որ Կրիտ կղզին Յունաստանին զիջելը նոյնքան անկարելի է, որ-

---

զում է, բայց որքան մօտենում է կամրջին, նեղվում է նրա ճանապարհը և կամրջի տակին բոլորովին ծածկվում է. մի քանի քայլ անհերևոյթանալով, ականջ խլացնող դղրդիւնով դուրս է վիժում երկրի խորքից։ Յաւելով յիշեցի, որ լուսանկարչական գործիքներ չունէի հետս այդպիսի մի հրաշափառ տեսարան այսօր ձեզ ներկայացնելու։ Առաւօտ էր. այդ տեսարանից կըշտանալու համար վեր եկանք ձիերից մի քանի րոպէ աւելի մտիկ անելու։ Խոկոյն մեզ չրջապատեցին քուրդ կանայք և աղջկերք, որոնք խիստ հետաքրքրվում էին մեզանով. ես նրանցից խնդրեցի երգել, մանկամարդ աղջիկներից մէկը իր գողտրիկ ձայնով զլեց մի խուժադուժ երգ, խուժադուժ եղանակով, որ այն ամենի տեսարանի և ամայի բնութեան հետ խիստ ներդաշնակ էր։

Արաղայի մեծ դաշտը այս գաւառի մէջն է. որի հիւսիսարևելեան ծայրին է Բայազիդ և Թադէի վանքը պարսից սահմանի վրա։

Արաղայի արևմտեան սահմանի վրա, մօտ 5 ժամ տարածութեամբ ձգվում է մի հրաբխական սև քարքարուտ, ուր մեծամեծ անձաւներ կան, ջուր, արօտատեղիք, որի մէջ մինչև 12 հազար հոգիք կարող են ծածկվել. ճանապարհ չմայողի համար դա մի լաբիւրինթոս է։ Այս տեղ են ապաստան գտնում բոլոր առևանգողները, գողերը և մարդասպանները։ Գաւառիս օդը բարեխառն է, ջուրն առատ, մշակված են միայն հայաբնակ մասերը։

Բէնդի-մահու գետը Արաղայի սարերէն կազմվելով անցնում է Բերկրու մօտից, կտրում է Վանայ Արճիշոյ ճանապարհը և թափվում է ծովը, ուր մեծ քանակութեամբ տառեխ են բռնում։ Բերկրու արևելեան կողմն է Սպահան լեռը, որի ծայրին գտանվում է Համանուն լիճը, որ կոռոգէ չրջակայ գիւղերը։ Դիրքը մեծ մասամբ դաշտային է. երկիրը պտղատու և լեռները արօտներով լի։ Արաղայի դաշտից հեռու չէ Թանիր անուանված հրաբխային բաժակը, որի ստորոտներից հանում են առատ ծծումբ։ Գործոթ գիւղի մօտ գտանվում են քարածուխի հանքեր և նաւթի աղբիւրներ։ 2,200 տուն գաղթական կարող է տեղաւորվել մասնաւորապէս Արաղայի մէջ, որ հնում 300 գիւղատեղի է եղել, այժմ 400 տուն հէյսարանցի քրդեր են բնակվում, խաչնարածութեամբ և գողութեամբ ապրելով։ Արաղայ դաշտը բոլորովին անմշակ է մնացած։

| | |
|---|---|
| Գիւղերի թիւ | 93 |
| Հայերի թիւ | 16,964 |
| Քրդեր Լվեցի աշիրաթից | 5000 |
| Եզեղիք | 400 |
| Վարժարաններ | 2 |
| Աշակերտներ | 75 |

Միացեալ ընկերութիւնը մի ուսումնարան է բացած Գործոթ գիւղի մէջ։ Գործոթ գիւղը նշանաւոր է վասպուրականի մէջ իր բնակիչների քաջասրտութեամբ։

4.

Խօշաբ

Խօշաբ գաւառը Վանայ հարաւ-արևելեան կողմն է, նրանից 10 ժամ հեռաւորութեամբ։ Հայոց ձոր, Նօրտուզ, Ջիւլամերկ, Աղբակ և Բերկրի գաւառները նրան շրջապատում են։ Հիւսիսային կողմից ձգվում է մինչև Գօթուր, պարսից սահմանը։ Գաւառագլուխն է Խօշաբ բերդաւանը, որ ունի աւերակների դերբուկներ և մի կիսակործան բերդ, Խօշաբ գետի աջափի քառաժայռի վրա նկարչական գեղեցկութեամբ բարձրացած։ Դիրքը սարադաշտեայ է։ Ունի զօվասուն լեռներ։ Զուխ լեռը (հնում Արմաս), որի վրայով անցնում է Վանայ և Թաւրիզի առևտրական ճանապարհը, ձմեռը խիստ վտանգաւոր է լինում. շատ անգամ բքի տակ թաղվում են ամբողջ կարաւաններ։ Օդը ցուրտ է, հողն արգասաբեր. սնուցանում է բազմաթիւ ոչխարների հօտեր։ Ունի մի գետ Խօշաբ անուն, որ Հայոց ձորից անցնելով, Անգղայ գետ է կոչվում Անգեղ վանքի *) և գեղի անունով։ Այս գետէն, ինչպէս Վանայ ծովը թափվող բոլոր գետերից, տառեխ ձկներ են բռնվում։

| | |
|---|---|
| Գիւղերի թիւ | 48 |
| Հայոց թիւ | 9,966 |
| Եզեղիք | 1,500 |
| Վրանաբնակ քրդեր **) | 3,886 |
| Վարժարաններ | 2 |
| Աշակերտներ | 91 |
| Եկեղեցիք | 2 |

5.

Աղբակ (Հէքիարի)

Վանէն 24 ժամ հեռաւորութիւն ունի, սահմանակից է Խօշաբ, Գեաւառ և Ջիւլամերկ գաւառներին. հիւսիս-արևելքից հանում է Սալմաստ, պարսից սահմանին։ Գաւառագլուխն է Բաշ-գալէ աւանը, որ Վանայ և Թաւրիզի վաճառականական ճանապարհի վրա է։ Դիրքը հարթ, օդը ցուրտ, վտակները ձկնալի, հողն արգիւնաբեր. սնուցանում է ոչխարներ, եզներ, ընտիր և անուանի են գոմէշները։ Սօրադէր գիւղի մօտ կաւիճի հանք կայ։ Աղբակի մէջն է ս. Բարդուղիմէոս առաքելու հոյակապ վանքը, որ մօտերս «Միացեալ ընկերութեանը» յանձնվեց մի գիշերօթիկ ուսումնարան կառուցանելու համար։

Այս գաւառը ծածկված է բազմաթիւ բերդերի և վանքերի աւերակներով, որ շինված են եղել Արծրունեաց թագաւորութեան ժամանակ, ուր գտնվում են և նրանց գերեզմանները։

| | |
|---|---|
| Գիւղերի թիւ | 81 |
| Հայերի թիւ | 9,959 |
| Վարժարաններ | 5 |
| Աշակերտներ | 308 |
| Քրդեր | 8,608 |
| Ասորիք | 1,447 |
| Հրէաներ | 489 |

Այս գաւառում բնակվում է Շիտանցի ցեղի մի մասը։

6.

Գեավառ

Գեավառ Վանէն 24 ժամ հեռաւորութիւն ունի, կից է Աղբակին, Նօրտուզին, Զիրէին և Ռէվանտուզին։ Արևելեան կողմից սահմանակից է Պարսկաստանին։ Գաւառագլուխն է Տիզէ մեծ գիւղը և Նէյրի, ուր նստում էր Շէյխ Իբրահիմ, որի անունը անցեալ 1880 թ. Պարսկաստանի մէջ արած ապստամբութեամբ յայտնի եղաւ աշխարհին։

Այս գաւառը գրեթէ ամբողջապէս քրդերով է բնակեցրած։ Հայերը հանգիստ չը գտնելով բրդերի երեսից, մի մասը ցրվել, մի մասը քրդացել է, մնացած մասը քրդերից զանազանութիւն չունի։ Նէյրի անունով գետակը այս գաւառից անցնելով դէպի Նօրտուզ օժանդակում է Տիգրիսին։

| | |
|---|---|
| Գիւղերի թիւ | 72 |
| Հայերի թիւ | 5,975 |
| Ասորիների թիւ | 8,905 |
| Հրէաների թիւ | 320 |
| Քրդերի թիւ | 10,226 |

Պէտք է նկատել, որ այս գաւառում ոչ եկեղեցիներ և ոչ ուսումնարաններ կան։

7.

Ջիւլամերկ

Ջիւլամերկ հեռի է Վանէն 25 ժամ ճանապարհով։ Այս գաւառը կից է Գեավառ, Աղբակին, Նօրտուզ և Շատախ գաւառներին։ Դիրքը լեռնոտ է։

*) Անգեղ վանքի սեղանի հիմնաժայռը միշտ քրտնած է լինում իւղային կաթիլներով։ Ջերմեռանդ ուխտաւորները այդ կաթիլները ժողովում են և իբրև հրաշագործ աչքացաւի դեղ գործ են ածում։ Քննված չէ, թէ ինչից է առաջ գալիս այդ իւղը։

**) Քիւրդերի 4 ցեղեր, որք են մուկուրցիք, թակուրցիք և չիտանցիք։